

### ՎԱՆԱՅ ՇՈՒՆ

Դիտուած է որ վանայ ծովս տարուէ տարի աւելի կը լեցուի և կ'աճի. երբեմն չոր տարիներու պատճառաւ աճումը կը դադրի, ինչպէս որ որոշ կ'իմացուի իր հիւսիսային արևելեան ափանցը վրայ, որ ընդհանրապէս տափարակ են. բայց յետոյ նորէն իր բնական ընթացքը կը սկսի: Վանայ ծովս ատենօք աւելի շատ կղզի ունէր. ստորոտնին ջրով պատած թերակղզիներ՝ քիչ քիչ կղզի կը դառնան, կամ բոլորովին կ'ընկղմին: « Վանայ ծերերը կը հաստատէին, կ'ըսէ Պ. Շղրէքը, որ լճակին հիւսիսային արևելեան ափոնքէն անցնող ճամբան՝ ջրոց աճմանը պատճառաւ՝ երթալով դէպ 'ի ներս քաշուեր է. քսան, երեսուն տարուան երիտասարդներ ալնոյնը դիտած են »: Արձէշ աւանը գրեթէ ջրոց տակ է. նմանապէս Ատէլճիվազ (Արծկէ) ալնոյն սպառնալեաց տակ է. արդէն պատերն կէս մը ջրով ծածկուած են.... լճին ջրերն կամաց կամաց վանայ քաղաքին կը մօտենան. ղանիկա շրջապատող տափարակ երկիրներն ճախճախուտ դարձած են. ձկնորսները իրենց կարթերը կը կապեն՝ ալեաց կուլ եղած ծառոց կոնեղաց. հորերու ջուրն խմելու աղէկ շիգար, և տուներու հիմը դնելն շատ գժուարին է....: Ուսկից առաջ կու գայ ջրոց աճումն և մակերեսութին բարձրանալն: Պ. Շղրէքը նախ և առաջ կը դիտէ որ՝ լիճն շատ վտակներ ընդունելով՝ զորնք անդադար կը հոսեն լերանց աղբիւլք, յայտնի ելք մը չունի. Ջրոց գոլորշիացումն ալ շատ քիչ է՝ մակերեսութին բարձրութեանը պատճառաւ, որ է 4625 մեդր:

Վանայ ծովս, չայոց ջոսակն, Յունաց Թոսրիդիս, արդեօք հիներուն ըսածին պէս ստորերկրեայ ջրանցքներով՝ կ'երթայ ջորոս լերանց անզիի կողմը Տիգրիսի աղբիւլքները սկզբնաւորելու: Յայտնի է որ այս գետիս սկիզբն՝ այն լերանց հարաւային կողմն է, որոնց հիւ-

սիսային սառուուն կ'ոռոգուի վանայ ծովէն, մեծ աղբիւլքներէ և դրեթէ գետերէ առաջ գալով:

Երկրին մէջ աւանդութիւն մը կայ, թէ ատենօք լճին ջուրն՝ հարաւային ափանց վրայ տեսնուած ծակէ մը անդունդի մը մէջ կը թափի եղեր: Թափառական հովիւներ, հետաքրքրութեամբ կերպով մը կը խցեն ծակը. քանի մը օր եաքը գալով չեն գտներ՝ վասն զի ջուրն ծածկեր է եղեր զայն, և հետզհետէ աճեր է:

Վանայ լճին ջուրն շատ բորակ և ածդզային թթուտ կը պարունակէ. ասկէ կ'իմացուի որ ըմպելի չէ. շատ աղէկ կու գայ լախ լուալու և շուտով կը հանէ աղտերը. գժբաղդաբար իր դպած նիւթերը կը գունաւորէ. հարկ կ'ըլլայ որ լախերը անով լուալէն վերջը, թեթև մը սապոնուին և քիչ մը յրհորի կամ դետոյ ջրէ անցուին:

### ՀԵՏԱՔՐԴՐԱԿԱՆԻՑ

Խաղկանց բոյրէն պատժառաք դէպքեր ու մահեր: — Տոքոր Հիւէ-Ցէրրէ 1866ին փետրուար ամսուն մէջ ամուր կազմուածքով երիտասարդի մը քով կանչուեցաւ որ հիւանդութեանը հոգտանի. այս երիտասարդը առջի օրը ողջ առողջ պառկեր էր՝ ու երկրորդ օրը թմրած յօդուածներով, զլիսուպտոյտով և սրտի խառնուկով արթնցեր էր. 'ի վերայ այսր ամենայնի ուզեր էր անկողնէն ելլալ, բայց հազիւ թէ քանի մը քայլ առեր էր՝ հարկ եղեր էր նորէն անկողին մոնել:

Մնսովոր էին հիւանդին կրած զգաց մունքները: Երբ գլուխը բարձին կու տար և աչքերը բաց կը բրոնէր, քիչ կը նեղուէր. բայց անմիջապէս որ աչքերը կը գոցէր ու պղտի շարժմունք մը կ'ընէր, մէկէն ծովուպատճառած տկարութեան նման նեղութենէ մը կը բռնուէր: Այս վիճակը երկու օր տեսեց առանց աղէկ-